https://doi.org/10.46991/S&L/2020.87.041

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՄԱՎՈՐ ԼՈՒԾԱՐՄԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՔԵՐԸ

Աշխեն Սողոմոնյան
ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս

Տնտեսական ընկերությունների կամավոր լուծարումը ընկերության գոյությունը դադարելու առաջին հայացքից պարզ, սակայն իրավաբանական անձի՝ տեսական և գործնական բազմաթիվ խնդիրներ ունեցող լուծարման տեսակներից մեկն է, որի իրականացման հիմքերի ուսումնասիրությունը ունի կարևոր տեսական-իրավական նշանակություն:

Իրավաբանական անձանց կամավոր լուծարման գործընթացի ուսումնասիրության շրջանակներում նախևառաջ կարևոր է անդրադառնալ կամավոր լուծարում հասկացությանը: Նշենք, որ ինչպես մասնագիտական գրականության մեջ, այնպես էլ նորմատիվ իրավական ակտերում կամավոր լուծարման հասկացության բանաձևումը բացակայում է: Իսկ այս հարցի պատասխանը գտնելու համար էական է այն հատկանիշների բացահայտումը, որոնց հիման վրա հնարավոր կլինի սահմանել կամավոր լուծարում հասկացությունը: Հարկ է նշել, որ այդ հատկանիշների բացահայտումը ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, քանի որ դրանց օրենսդրական ամրագրումը կամավոր լուծարման գործընթացին կարող է հաղորդել որոշակիություն:

Մեր կարծիքով կամավոր լուծարման կարևորագույն հատկնիշներից են՝ կամավորությունը[1], լուծարման մասին որոշում կայացնող ընկերության՝ իր պարտատերերի հանդեպ ստանձնած պարտավորությունները պատշաճ կատարելու ունակությունը, ինչպես նաև իր պարտապաններից պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելու հնարավորության առկայությունը: Մեր կողմից հատկապես կարևորվում է պարտապաններից վաղաժամկետ կատարում պահանջելու հատկանիշի առկայությունը, քանի որ երկարաժամկետ պարտավորությունների առկայությունը որոշակի դեպքերում կարող է իմաստազրկել լուծարման գործընթացը և այն դարձնել տնտեսապես ոչ ձեռնտու քայլ:

Ըստ էության իրավաբանական անձնաց կամավոր լուծարումը կարելի է բնորոշել որպես լուծարման տեսակ, որի դեպքում լուծարման մասին որոշումը կայացնում է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ լիազորված մարմնի կողմից՝ առանց երրորդ անձանց միջամտության, լուծարվող իրավաբանական անձը ի վիճակի է բավարարել իր պարտատերերի պահանջները, ինչպես նաև պարտապաններից կարող է պահանջել պարտավորության վաղաժամկետ կատարում:

Գործող քաղաքացիական օրենսդրությամբ՝ առևտրային իրավաբանական անձանց հիմնադիրները (մասնակիցները) ցանկացած հիմքով կարող են ձեռնարկել այդ անձի լուծարման գործընթաց՝ ներառյալ այն հիմքերով, որոնք թվարկված են

[1] Ամենաընդհանուր իմաստով՝ կամավորությունը կարելի է բնորոշել հետևյալ հատկանիշներով՝ գործողություն կամ անգործություն սեփական ցանկությամբ և կամքով, գործողությունը չպետք է կատարվի կամ չկատարվի արտաքին ազդեցությամբ, այսինքն՝ չպետք է լինի սպառնալիք, բռնություն կամ արտաքին այլ հարկադրանք:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք[1]) 67-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետում: Նշված հոդվածում իրավաբանական անձանց կամավոր լուծարման հիմքերի ցանկը սպառիչ չէ: Այսինքն՝ իրաբանական անձը կարող է իր հիմնադիրների (մասնակիցների)[2] կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի որոշման հիման վրա լուծարվել ցանկացած հիմքով՝ ինչպես օրենքով կամ կանոնադրությամբ նախատեսված, այնպես էլ չնախատեսված, իսկ կանոնադրությամբ կամավոր լուծարման ինքնուրույն հիմքերի նախատեսման որևէ արգելք չկա: Բայց այնուամենայնիվ անկախ նրանից, թե ընկերության հիմնադիր փաստաթղթերում նախատեսված են կամավոր լուծարման հիմքեր, թե ոչ[3], մասնակիցները կարող են ընդունել կամավոր լուծարման մասին որոշում նաև այնպիսի հիմքով, որը նախատեսված չէ օրենքով: Այսպես, եթե առևտրային ընկերությունը հիմնադրվել է որոշակի ժամկետով, ապա այդ ժամկետի լրանալը ընկերությունը լուծարելու հիմք է համարվում: Գործնականում առևտրային իրավաբանական անձանց կանոնադրությամբ չի նախատեսվում դրա գործունեության ժամկետը, և հիմնադիրներին իրավունք է տրվում ցանկացած պահի լուծելու դրա գործունեության դադարեցման հետ կապված հարցերը: Իսկ եթե իրավաբանական անձը հիմնադրվել է որոշակի նպատակով (օրինակ, որևէ շինարարական օբյեկտ կառուցելու նպատակով), ապա այն կարող է լուծարվել այդ նպատակին հասնելու կապակցությամբ, կամ էլ եթե պարզվի, որ հնարավոր չէ դրան հասնել (օրինակ, եթե կոնկրետ գործունեության ոլորտում նախատեսվի պետական մենաշնորհ): Հարկ է նշել, որ ընկերության կանոնադրությամբ կարող է ընդհանրապես չնախատեսվել գործունեության որևէ նպատակ, քանի որ գործունեության նպատակի և առարկայի սահմանումն ավելի բնութագրական է ոչ առևտրային իրավաբանական անձանց: Քանի որ տնտեսական ընկերություններն օժտված են ունիվերսալ իրավասուբյեկտությամբ, դրանց հիմնադիրներն իրավունք ունեն չսահմանել իրենց իրավասուբյեկտության շրջանակները: Բայց միաժամանակ օրենքով արգելված չէ հիմնադիրներին կանոնադրությամբ ամրագրելու տվյալ իրավաբանական անձի՝ շահույթ ստանալուն ուղղված գործունեության որոշակի նպատակ և առարկա:

Մասնագիտական գրականության մեջ իրավաբանական անձանց կամավոր լուծարման հիմքերի վերաբերյալ միասնական մոտեցումը բացակայում է: Կան հեղինակներ, որոնք առաջ են քաշում իրավաբանական անձանց կամավոր լուծարման նոր հիմքեր, կամ օրենքով նախատեսվածներին տրվում են տարբեր մեկնաբանություններ: Օրինակ, Հ. Ա. Սարգսյանը, ուսումնասիրելով առևտրային իրավաբանական անձանց լուծարման տնտեսական դրդապատճառները, որպես կամավոր լուծարման առանձին հիմք նշել է ընկերության հիմնադիրների (մասնակիցների) մոտ հետագա գործունեության համար կամքի (ցանկության) բացակայությունը, ինչը կարող է պայմանավորված լինել հիմնադիրների միջև, օրինակ՝ ընկերության կառավարման շուրջ լուրջ տարաձայնությունների առկայությամբ[4]: Հեղինակը նշում է նաև, որ նման հիմքը ավելի շատ կապված է մարդկային գործոնի հետ, չու-

---

[1] ՀՀՊՏ 1998.08.10/17(50) ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 05.05.1998թ., ուժի մեջ է մտել 01.01.1999թ.

[2] ՀՀ քաղաքացիական օրենսգիրքի 67-րդ հոդվածում օրենսդիրն այդ լիազորությունը վերապահել է հիմնադիրներին (մասնակիցներին), սակայն հարկ է նշել, որ գործնականում հիմնադիրները նույնանում են մասնակիցների հետ միայն այն դեպքում, երբ մինչև լուծարման մասին որոշում կայացնելը հիմնադիրների կազմի փոփոխություն տեղի չի ունենում:

[3] ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի պարտավորեցնում իրավաբանական անձի հիմնադիրներին կանոնադրությամբ նախատեսել լուծարման կամավոր հիմքեր:

[4] Տե՛ս **Саргсян А. А.** Основания добровольной ликвидации хозяйственных обществ по гражданскому законадательству российской федерации // Вестник РГГУ. Серия «Экономика. Управление. Право», 2015, №1 (144), էջ 127:

նի տնտեսական հիմնավորվածություն և ավելի շուտ կրում է սոցիալական բնույթ: Մեր կարծիքով, մասնագիտական գրականության մեջ իրավաբանական անձանց կամավոր լուծարման հիմքերի շարքում նման հիմք ուսումնասիրելը միգուցե արդարացված է, բայց օրենքում այն որպես կամավոր լուծարման առանձին հիմք նախատեսելն արդարացված չէ, քանի որ եթե ընկերության ընդհանուր ժողովը որոշում է կայացնում կամավոր լուծարման վերաբերյալ, պատճառաբանել նման որոշումը հիմնադիրների մոտ տարաձայնությունների առկայությամբ, անտեղի է, քանի որ նման որոշումը չպետք է պատճառաբանված լինի որևէ հանգամանքով:

Մեկ այլ տեսաբան՝ Ի. Ս. Շիտկինան, անդրադառնալով բաժնետիրական ընկերությունների կամավոր լուծարման հիմքերին, գտնում է, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքով իրավաբանական անձանց կամավոր լուծարման հիմքերը սպառիչ չեն թվարկված, և որպես բաժնետիրական ընկերության կամավոր լուծարման հիմք առանձնացնում է այն դեպքը, երբ երկրորդ և յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո պարզվում է, որ ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի նվազագույն չափից, ապա ընկերությունը պարտավորված է լինում ընդունել լուծարման մասին որոշում[1]: Իհարկե այն հանգամանքը, որ այս պարագայում ընկերության լուծարման մասին որոշումը կայացնում է հենց ընկերությունը, հիմք է տալիս ենթադրելու, որ սա կամավոր լուծարման դեպք է, բայց, մեր կարծիքով, որոշման հիմքում ընկած է ոչ թե հիմնադիրների կամ մասնակիցների ցանկությամբ արտահայտված կամքը, այլ օրենքի պարտադիր պահանջը, ուստի այն դիտարկել որպես կամավոր լուծարման հիմք արդարացված չէ: Եվ բացի այդ՝ կամավոր լուծարումը պայմանավորված է տվյալ ընկերության իրավաչափ վարքագծով, իսկ կամավոր լուծարման վերաբերյալ օրենսդրական ձևակերպումները կրում են դիսպոզիտիվ բնույթ: Օրենքը նման դեպքերում նախատեսում է միայն կամավոր լուծարման վերաբերյալ որոշում ընդունելու հնարավորություն և ոչ թե պարտականություն, ուստի այդ գործընթացը պետք է բխի ընկերության հիմնադիրների (մասնակիցների) շահերից:

Անդրադառնալով այս հարցի շուրջ այլ հեղինակների կարծիքների՝ նշենք, որ Վ. Կ. Անդրեևը և Ա. Ե. Կիրպիչևը որպես իրավաբանական անձանց կամավոր լուծարման հիմք, բացի օրենքում թվարկվածներից, առանձնացնում են նաև տվյալ իրավաբանական անձի հետագա գործունեության աննպատակահարմարությունը[2]: Իսկ օրինակ՝ Օ. Ա. Մակարովան որպես բաժնետիրական ընկերությունների կամավոր լուծարման հիմք նշում է միայն ժամկետի լրանալը և նպատակին հասնելը[3]: Ըստ Մ. Յու. Տիխոմիրովի՝ օրենսդրությունը չի սահմանափակում սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասնակիցների հայեցողությունը կամավոր լուծարման վերաբերյալ որոշման ընդունման հիմքերը սահմանելիս: Ուստի պետք է ենթադրել, որ ընկերության մասնակիցները իրավունք ունեն օրենքով սահմանված կարգով կայացնելու ընկերության լուծարման մասին որոշում՝ դրա գործունեությունը շարունակելու աննպատակահարմարությամբ պայմանավորված ցանկացած պատճառով[4]:

---

[1]Տե՛ս Корпоративное право, отв. ред. И.С.Шиткина, Волтерс Клувер, М., 2007, էջ 201: Հարկ է նշել, որ նմանատիպ իրավական կարգավորում պարունակում է նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքը:

[2]Տե՛ս **Андреев В. К., Кирпичев А. Е.** Юридические лица. Введение в корпоративное право. М. 2014, էջ 33:

[3]Տե՛ս **Макарова О. А.** Корпоративное право. Учебник, Волтерс Клувр. М., 2005, էջ 178:

[4]Տե՛ս **Тихомиров М. Ю.**Общество с ограниченной ответственностью, практическое пособие по приминению закона в новой редакции. Изд-во Тихомирова М. Ю., 2010, էջ 186: https://www.twirpx.com/file/206583/ (վերջին այցելություն 13.06.2019):

Ուսումնասիրելով այլ երկրների՝ իրավաբական անձանց կամավոր լուծարման հիմքերի վերաբերյալ օրենսդրական ձևակերպումները՝ հետաքրքրական են Անգլիայի Թագավորության օրենսդրության մեջ տեղ գտած կարգավորումները: Մասնավորապես, ընկերությունը կարող է կամավոր լուծարվել երեք պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում: Առաջին, եթե լրացել է այն ժամկետը, որով այն հիմնադրվել է, կամ ընկերության հիմնադիր փաստաթղթերով նախատեսված ցանկացած իրադարձության վրա հասնելը, որը կարող է հանգեցնել ընկերության լուծարման, և ընկերության ընդհանուր ժողովը որոշում է ընդունել՝ պահանջելով ընկերության կամավոր լուծարում (այս դեպքը հազվադեպ է լինում): Երկրորդ, ընկերությունը հատուկ որոշում է ընդունում իր լուծարման վերաբերյալ: Երրորդ ընկերությունը արտահերթ որոշում է ընդունում, որ իր պարտավորությունների ուժով ի վիճակի չէ շարունակելու իր գործունեությունը, և խելամիտ կլինի կամավոր լուծարվել[1]:

Իրավաբանական անձնաց կամավոր լուծարմանը վերաբերող ՀՀ օրենսդրության նորմերի ճշգրիտ վերլուծության նպատակով հարկ է անդրադառնալ այն հարցին, թե որն է իրավաբանական անձի կամավոր լուծարման նպատակը: Տնտեսական ընկերությունների կամավոր լուծարման առաջնային նպատակն այդ ընկերության գոյության դադարեցումն է: Բացի այդ՝ կարևոր է նաև լուծարվող ընկերության գույքի բաշխումը մասնակիցների միջև:

Օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված են իրավաբանական անձանց կամավոր լուծարման հետևյալ հիմքերը. այն ժամկետը լրանալու կապակցությամբ, որով ստեղծվել է իրավաբանական անձը, կամ այն նպատակին հասնելու կապակցությամբ, որի համար այն ստեղծվել է:

Ինչպես տեսանք, իրավաբանական անձանց կամավոր լուծարման վերը նշված հիմքերի դասակարգումն իրավաբանական գրականության մեջ տարատեսակ մեկնաբանությունների տեղիք է տվել: Օրենսգրքի նշված հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետի տառացի մեկնաբանությունը ցույց է տալիս, որ իրավաբանական անձը կարող է լուծարվել դրա հիմնադիրների (մասնակիցների) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված մարմնի որոշմամբ: Մասնագիտական գրականության մեջ տեղ է գտել այնպիսի կարծիք, ըստ որի՝ իրավաբանական անձի գործունեության ժամկետի լրանալը կամ դրա կողմից նպատակին հասնելը հադիսանում են միայն կամավոր լուծարման վերաբերյալ որոշում ընդունելու պայմաններ[2]: Գ. Շապկինայի կարծիքով՝ իրավաբանական անձի գործունեության ժամեկտի լրանալը կամ նպատակին հասնելը իրավաբնական անձի կամավոր լուծարման պատճառներ են և ոչ թե կամավոր լուծարման ինքնուրույն հիմքեր[3]: Ա. Ստեպանովը գտնում է, որ ժամկետի լրանալը կամ նպատակին հասնելը օրենքում նշվում են միայն որպես կամավոր լուծարման մասնավոր դեպքեր, և որ ընկերությունը կարող է կամավոր լուծարվել նաև առանց որևէ պատճառի[4]: Համանման կարծիք է հայտ-

---

[1]Տե՛ս Company law, Alan Digman and John Lowry, 7th edition, Oxford University press, 2012, 453-454էջեր,https://books.google.am/books?id=4ZWcAQAAQBAJ&pg=PR3&dq=company+law+alan+dignam+and+john+lowry+7th+edition&hl=en&sa=X&ved=0ahUKEwi3itzU9XiAhWJl4sKHeWeCsAQ6AEILDAB#v=onepage&q&f=false (վերջին այցելությունը 13.06.2019):

[2]Տե՛ս Гражданское право: Учеб./ Отв. ред. Е. А. Суханов.- М.: Бек, 1998, Т. 1, էջ 202, կամ Комментарий части первой Гражданского кодекса Российской Федерации для предпринимателей.- М., Фонд «Правовая культура», 1995, էջ 95:

[3]Տե՛ս **Шапкина Г.** Новое в российском акционерном законодательстве// Хозяйстви и право. 2001, էջ 61:

[4]Տե՛ս **Степанов**. **А.** Ликвидация юридического лица// Право и экономика. 2004, № 8, էջ 19:

նել նաև Մ. Ի. Բրագինսկին[1]: Այս կածիքի կողմնակից է նաև Ս. Է. Ժիլինկսին, ով նշում է, որ ՌԴ քաղաքացիական օրենսգրքի[2] 61-րդ հոդվածի 2-րդ կետում (հիմքերը նույնն են, ինչ Օրենսգրքի 67-րդ հոդվածում) թվարկված է տնտեսական ընկերության կամավոր լուծարման հիմքերի ցանկ, ինչպես օրինակ՝ նպատակին հասնելը, որի համար ընկերությունը հիմնադրվել է, ժամկտի լրանալը, որով այն ստեղծվել է, կամ դատարանի կողմից իրավաբանական անձի գրանցումն անվավեր ճանաչելը՝ կապված այն ստեղծելու ժամանակ թույլ տրված իրավախախտումների հետ[3]: Նրա կարծիքով՝ այդ ցանկը սպառիչ չէ, բայց ընկերությունը լուծարելու այլ հիմքեր կարող են նախատեսվել միայն օրենքով: Ուստի ստացվում է, որ ընկերությունը կամավոր լուծարելու վերաբերյալ որոշում չի կարող ընդունվել առանց որևէ պատճառի: Հեղինակը նշված աշխատությունում խորհուրդ է տալիս տնտեսական ընկերության հիմնադիրներին հարկադիր լուծարման սպառնալիք առաջանալու դեպքում դիմել կամավոր լուծարման: Բայց այդ՝ խորհուրդը դժվար թե հնարավու լինի իրականացնել այդ հետևության պայմաններում, մանավանդ, եթե ընկերության գործունեության ժամկետը չի լրացել, կամ ընկերությունը չի հասել կանոնադրությամբ իր համար սահմանված նպատակներին: Այս տեսակետը ներկայումս շատ տարածված է, բայց միակ անվիճելին չէ: Մասնավորապես, ընկերությունը լուծարելու վերաբերյալ որոշման հիմքերը անվիճելի են, և չի պահանջում որևէ հիմնավորում, այդ իսկ պատճառով ներկայիս իրավակարգավորման պայմաններում ժամկետի լրանալը կամ նպատակին հասնելը չի կարող դիտարկվել որպես կամավոր լուծարման որոշում կայացնելու անվերապահ հիմքեր:

Պետք է նշել, որ ժամկետի լրանալը կամ նպատակին հասնելը զարգացած երկրների օրենսդրությամբ համարվում է ընկերության գործունեությունը դադարեցնելու և լուծարման մասին որոշում կայացնելու ինքնություն իրավական հիմքեր (օրինակ՝ ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա)[4]: Այսպես, օրինակ՝ Գերմանիայում ժամկետի լրանալը, որով ընկերությունը հիմնադրվել է, համարվում է այն լուծարելու առանձին հիմքերից մեկը[5]:

Օրենսդրի ձևակերպումը քննադատության է արժանացել նաև Ա. Վ. Գաբովի կողմից: Վերջինս նշել է, որ եթե իրավաբանական անձանց լուծարման այնպիսի հիմքը, ինչպիսին է լուծարումը հիմնադիրների (մասնակիցների) կամ իրավասու մարմնի որոշման հիման վրա, տարակարծությունների տեղիք չի տալիս, ապա ժամկետի լրանալու կամ գործունեության նպատակին հասնելու հիմքով լուծարումը վիճարկելի է[6]: Բանն այն է, որ համապատասխան իրավաբանական փաստի առկայության պայմաններում կառավարման մարմինները կարող են չկայացնել կամավոր լուծարման մասին որոշում, և կարող է առաջանալ հարկադիր լուծարմանը նման մի իրավիճակ, թեև պարզ չէ, թե արդյոք կարելի է նման անգործությունը որակել որպես իրավախախտում:

---

[1]Տե՛ս Реорганизация и ликвидация юридического лица по законодательству России и стран западной Европы/ Под. ред. М. И. Брагинского. М., Юристь, 2000, էջ 148-149:

[2]Տե՛ս http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_5142/ 974be1fad91d7bc49b99851f8e9fc52eae6af180/ (վերջին այցելությունը 20.11.2019)

[3]Տե՛ս **Жилинский С. Э.**, Предпринимательское право (правовая основа предпринимательской деятельности): Учеб. – М., Норма, 2000 , էջ122:

[4] Տե՛ս Гражданское и торговое право капиталистических государств, международные отношения, М., 1992, էջ 131, Основные институты гражанского права зарубежных стран: Сравнительно-правовое иследование/ Под ред. В. В. Залесского, М., Норма, 2000, էջ.101-103:

[5] Տե՛ս Проблемы гражданского и предпринимательского права Германии, М., БЕК, 2001, էջ. 282-283:

[6] Տե՛ս **Габов. А. В.** Ликвидация юридического лица, история развития института в российском праве, современные проблемы и перспективы. М., Статут, էջ 80:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ օրենսդրի նման կոշտ ձևակերպումը արդար չէ: Օրենքով պետք է նախատեսվեն ժամկետը լրանալու կամ նպատակին հասնելու որոշակի իրավական հետևանքներ: Եվ որպեսզի օրենքի նման ձևակերպումը տարակարծություններ չառաջացնի, առաջարկում ենք Օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ենթակետով հստակ սահմանել պարտականություն՝ վերը նշված իրավաբանական փաստերի առկայության դեպքում կոնկրետ ժամանակահատվածում որոշում կայացնել դրա հետագա ճակատագրի վերաբերյալ, կա՛մ իրավաբանական անձի կանոնադրության համապատասխան փոփոխություններ կատարելու արդյունքում երկարաձգել իրավաբանական անձի գործունեության ժամկետը, կա՛մ իրավաբանական անձի համար նոր նպատակ սահմանել, կա՛մ էլ իրավաբանական անձի գործունեությունն անժամկետ դարձնել, եթե հիմնադիրները (մասնակիցները) չեն ցանկանում լուծարել ընկերությունը:

Բացի այդ՝ գտնում ենք, որ կամավոր լուծարման վերաբերյալ Օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին»[1] և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին»[2] ՀՀ օրենքների համապատասխան նորմերը պետք է փոփոխել՝ առաջնորդվելով հետևյալ չափորոշիչով. որպես ընկերությունը կամավոր լուծարելու առանձին և ինքնուրույն հիմք պետք է դիտարկել ընկերությունը լուծարելու մասին մասնակիցների կամ իրավասու մարմնի՝ ընկերությունը լուծարելու մասին անպայմանական որոշումը՝ հաշվի առնելով, իհարկե, իրավաբանական անձանց առանձին տեսակների, հատկապես ոչ առևտրային իրավաբանական անձանց առանձնահատկությունները: Նման որոշումը պետք է լինի առանց որևէ հիմնավորման. ինքնին որոշման առկայությունը կամավոր լուծարման համար պետք է լինի բավարար պայման:

ПОНЯТИЯ И ОСНОВЫ ДОБРОВОЛЬНОЙ ЛИКВИДАЦИИ ХОЗЯЙСТВЕННЫХ ОБЩЕСТВ

Ашхен Согомонян
Преподаватель кафедры гражданского права ЕГУ

Изучение основ добровольной ликвидации хозяйственных обществ имеет важное теоретическое и практическое значение. В юридической литературе и нормативных правовых актах не определяется понятие добровольной ликвидации. Чтобы найти ответ на этот вопрос, важно определить признаки, на основе которых можно определить понятия добровольной ликвидации. Автор предложил понятие добровольной ликвидации, также в статье были затронуты особенности добровольной ликвидации, обсуждены основы добровольной ликвидации, включенные в Гражданский кодекс РА и соответствующие законы, было предложено внести соответствующие законодательные изменения, чтобы существующие правовые нормы не приводили к разногласиям. В статье также были обсуждены мнения ряда юристов и правовые нормы других стран, касаемых этих проблем.

[1] ՀՀՊՏ 2001.11.06/34(166) Հոդ.831, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 25.09.2001թ., ուժի մեջ է մտել 06.12.2001թ.
[2] ՀՀՊՏ 2001.12.07/38(170) Հոդ.910, ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 24.10.2001թ., ուժի մեջ է մտել 07.12.2001թ.

CONCEPTS AND BASES OF VOLUNTARY LIQUIDATION OF BUSINESS ENTITIES

Ashkhen Soghomonyan
Lecturer at the YSU Chair of Civil law

Studying the basics of voluntary liquidation of business entities is of great theoretical and practical importance. The legal literature and regulatory legal acts do not define the concept of voluntary liquidation. To find the answer to this question, it is important to identify the signs on the basis of which the concepts of voluntary liquidation can be defined. The author proposed the concepts of voluntary liquidation, the article also touched on the features of voluntary liquidation, discussed the basics of voluntary liquidation included in the Civil Code of the Republic of Armenia and relevant laws, it was proposed to introduce appropriate legislative amendments so that existing legal norms do not lead to disagreements. The article also discussed the views of a number of lawyers and the legal norms of other countries regarding these issues.

Բանալի բառեր – կամավոր լուծարում, տնտեսական ընկերություն, կամավոր լուծարման հիմքեր, ժամկետի լրանալ, նպատակին հասնել, կանոնադրություն, ընդհանուր ժողովի որոշում
Ключевые слова - доборовольная ликвидация, хозяйственное общество, основания добровольной ликвидации, срок действия, достижение цели, устав, решение общего собрания
Key words - voluntary liquidation, business company, grounds for voluntary liquidation, validity period, achievement of the goal, charter, decision of the general meeting.